ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մայիսի 12-ից 16-ը Ղազախստանի Հանրապետությունում (ք.Ալմաթի) Արժույթի Միջազգային Հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի կողմից կազմակերպված «Strengthening Public Investment Management Practicess/ Պետական ներդրումների կառավարման ամրապնդում» թեմայով դասընթացին մասնակցության արդյունքների մասին

1. **Գործուղվողը, զբաղեցրած պաշտոնը՝**

   Արմեն Մանուկյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025թ. մայիսի 2-ի թիվ 816-Ա հրամանի համաձայն 2025 թվականի մայիսի 12-ից 16-ը գործուղվել եմ Ղազախստանի Հանրապետության քաղաք Ալմաթի:

3. **Հրավիրող կողմը՝**

   Արժույթի Միջազգային Հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն

4. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն «Strengthening Public Investment Management Practicess/ Պետական ներդրումների կառավարման ամրապնդում» թեմայով դասընթացին:

5. **Քննարկված թեմաները՝**

   Դասընթացին մասնկացում էին նաև Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Մոնղոլիայի պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ: Դասընթացի ընթացքում քննարկվել են մասնակից երկրներում հանրային ներդրումների կառավարման ոլորտում իրականացվող միջոցառումները, առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարման համար ուղղվող աշխատանքները, ծրագրերի ընտրության վերաբերյալ որոշումների

իրազեկման արդյունավետ մոտեցումները՝ բյուջետային գործընթացի համատեքստում, ինչպես նաև կառավարման արդյունավետության բարձրացման համար տեղեկատվական համակարգերի ինտեգրման հետ կապված խնդիրները:

6. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝</u>**

Դասընթացի ընթացքում ներկայացվել է զեկույց «Strategies and tools to strengthen Public Investment in Armenia/ «Հայաստանում հանրային ներդրումները ամրապնդելու ռազմավարություններ և գործիքներ» թեմայի շուրջ, մանրամասն ներկայացնելով Հայաստանում հանրային ներդրումների կառավարման համակարգի ընթացակարգերը, հանրային ներդրումային ծրագրերի իրականացման գործում կատարվող բարեփոխումները: Դասընթացի կազմակերպիչների կողմից բարձր են գնահատվել Հայաստանում իրականացվող բարեփոխումները:

7. **<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝</u>**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ նմանատիպ դասընթացների շարունակականության ապահովման և մասնակիցների կողմից ձեռք բերված գիտելիքների գործնականում կիրառման:
Դասընթացի ավարտին շնորհվել է հավաստագիր (կցվում է):

8. **<u>Ստորագրությունը, ամսաթիվը՝</u>**

Արմեն Մանուկյան

19 մայիսի, 2025թ.